ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Ք. Երևան 29. նոյեմբերի, 2018 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 53 -Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահի 2016 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պարգևների ձևերը, ներկայացման և շնորհման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 27-Ա/Ք հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 29-Ա հրամանով հաստատված հավելվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ և 12-րդ կետերը, ինչպես նաև՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի (այսուհետև՝ Ինստիտուտ) տնօրենի 2018 թվականի նոյեմբերի 26-ի N 43166 գրությամբ ներկայացված միջնորդագիրը՝ Ինստիտուտի հիմնադրման 75-ամյակի կապակցությամբ

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ինստիտուտի Հովհաննես Թումանյանի կյանքի և գործունեության տարեգրության խմբի ղեկավար, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Աղասու Կիրակոսյանին շնորհել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի Ոսկե մեդալ:

2. Ինստիտուտի արտասահմանյան գրականության և համեմատական գրականագիտության բաժնի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Գոհար Լևոնի Կարագյոզյանին և ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Զարուհի Գևորգի Հայրյանին շնորհել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի պատվոգրեր:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լ. Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ